

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են անկախ ֆինանսավորման աղբյուրից ստացված երկրաբանական տեղեկության (այսուհետ՝ երկրաբանական տեղեկություն) պահպանության հետ կապված հարաբերությունները:

2. Մշտական պահպանության են ենթակա հետևյալ փաստաթղթերը՝

1) ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների երկրաբանական հաշվետվությունները (համակարգչային ձևավորմամբ կազմված երկու թղթային օրինակները և դրանց էլեկտրոնային կրիչները).

2) ընդերքի երկրաբանական ուսումնասիրությանն առնչվող առաջնային փաստաթղթերը՝ երկրաբանական գրառումների օրագիրը, տոպոգրաֆիական և երկրաբանական քարտեզները, վերծանված օդատիեզերական լուսանկարները, մերկացումների ուրվագծերը, երկրաֆիզիկական դաշտային հետազոտությունների տվյալները, ստորերկրյա ջրերի փորձնաֆիլտրացիոն հետազոտությունների տվյալները, հետազոտման և նմուշառման կետերի կոորդինատները.

3) ընդերքօգտագործողների կողմից երկրաբանական հանույթի (քարտեզագրման) նյութերը և դրանց բացատրագրերը՝ երկու թղթային օրինակները և դրանց էլեկտրոնային կրիչները.

4) օգտակար հանածոների արդյունահանման հետ չկապված (ստորերկրյա կառույցների շինարարության նպատակով) երկրաբանական ուսումնասիրությունների

ընթացքում ստացված տեղեկությունը (հաշվետվության տեսքով) կազմված երկու թղթային օրինակից և դրանց էլեկտրոնային կրիչներից:

3. Երկրաբանական տեղեկության պահպանությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը՝ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով:

4. Երկրաբանական տեղեկության նյութերը պետք է պահվեն այդ նպատակի համար հարմարեցված գրապահոցներում:

5. Գրապահոցներում պետք է պահպանվի օդի ջերմաստիճանի և խոնավության հետևյալ ռեժիմը՝

1) օդի թույլատրելի ջերմաստիճանը՝ պլյուս (+16)- (+18) աստիճան՝ ± 2 աստիճան շեղումով.

2) օդի հարաբերական խոնավությունը՝ 60-62 տոկոս՝ ± 5 տոկոս շեղումով:

6. Գրապահոցի յուրաքանչյուր սենյակում օդի ջերմաստիճանի և հարաբերական խոնավության չափման համար պետք է տեղադրված լինեն ջերմաչափ և խոնավաչափ, որոնց ցուցմունքները յուրաքանչյուր օր պետք է գրի առնվեն մատյանում:

7. Գրապահոցներում պետք է ապահովվի օդափոխությունը: Այնտեղ, որտեղ բացակայում է արհեստական օդափոխությունը և կատարվում է բնական եղանակով օդափոխություն պատուհանների կամ օդանցքների միջոցով, պետք է վերջիններս ծածկվեն մանրանցք ցանցիկներով: Փոշոտված ֆոնդային նյութերը պետք է մաքրել փոշեծծիչով:

8. Երկրաբանական տեղեկություն պարունակող նյութերում բորբոսի հայտնաբերման դեպքում դրանք պետք է չորացնել և մշակել ֆորմալինի երկու տոկոսանոց լուծույթով:

9. Պահպանության ենթակա մաշված և հնացած նյութերը պետք է վերականգնել: Չի թույլատրվում վերականգնման ենթակա նյութերը տրամադրել օգտագործման՝ մինչև դրանց վերականգնումը:

10. Գրապահոցներում նյութերը պահպանվում են դարակների (ստելաժներ) վրա, ստանդարտ թղթապանակների մեջ: Դարակները պետք է գտնվեն պատից 0.7 մետր հեռավորության վրա, իսկ ներքևի դարակները՝ հատակից 0.15 մետր բարձրության վրա: Դարակների միջև եղած հեռավորությունը պետք է 0.7 մետրից ոչ պակաս լինի, իսկ անցումների լայնությունը՝ 1.0 մետրից:

11. Պահպանման համար հատկացված գրապահոցները պետք է համապատասխանեն հակահրդեհային անվտանգության պահանջներին և ունենան՝

- 1) վստահելի փականներ ունեցող մետաղյա կամ փայտյա ամուր դռներ.
- 2) պատուհաններից կողմնակի անձանց հնարավոր ներթափանցումը կանխելու համար պետք է դրանք պատված լինեն մետաղյա պաշտպանիչ ցանցով.
- 3) մուտքի դռների, իսկ անհրաժեշտության դեպքում նաև պատուհանների ուղեկապում պետք է տեղադրված լինեն պահպանական ազդանշանակրեր:

12. Պետական և ծառայողական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունները պահպանվում են «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

13. Երկրաբանական տեղեկություն պարունակող նյութերի գույքագրումը կատարվում է ոչ պակաս, քան հինգ տարին մեկ անգամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ